

ԻՆՉՊԷ՞Ս ԴԱՌՆՈՒԹԵՆԷ ԱԶԱՏ ԸԼԼԱԼ

Ամէն դառնութիւն և բարկութիւն ու սրտստոութիւն և աղաղակ ու հայհոյութիւն վերցուի ձեպմէ ամէն չարութիւններով մէկտեղ, իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Բրիստոսով ներեց ձեպի: Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի վավակներու պէս, և սիրով վարուեցէք, ինչպէս Բրիստոս ալ մեզ սիրեց, ու իր անձը մեպի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ: Եփեսացիս 4: 31-5: 2

Վերոյիշեալ համարները մեպի կը սորվեցնեն ապատիլ ամէն դառնութենէ: Ինչպէս որ Յիսուս ըրաւ խաչին վրայ, մեր բոլոր արարքները պէտք է նմանին Յիսուսի:

Հին կտակարանին մէջ կը հանդիպինք կնկան մը որուն անունը Նոյեմի էր որ կը նշանակէ «հաճելի», այս կինը ամուսնուն և երկու տղոց հետ Իսրայէլէ փոխադրուեցաւ ուրիշ երկիր մը: Նախ իր ամուսինը մեռաւ, յետոյ յառաջիկայ 10 տարիներու ընթացքին երկու տղաքն ալ մեռան: Հոռոթայ 1: 13 Ի երկրորդ մասին մէջ կը կարդանք որ Նոյեմի կը՛սէ իր հարսերուն, «այս խնդիրը ինձի ձեպմէ աւելի ծանր եղաւ, քանի որ Տէրոջը ձեռքը իմ վրաս ծանրացաւ, յետ այսու-վիս Նոյեմի (հաճելի) մի՛ կոչէք, այլ վիս Մարա (դառնութիւն) կոչեցէք», և Նոյեմի դառնացաւ ու իր դառնութիւնը Աստուծոյ դէմ էր: Աստուած առած էր իր ամուսինը և երկու տղաքը, ուրեմն իր դառնութեան ապատճառը կը խորհէր որ Աստուած էր:

Ներկայիս այսպէս դառնացած անձեր կան և կարծես դառնանալը հաճելի կը թուի իրենց, կը խորհին որ եթէ դառնութենէ ապատին ալ ապրիլու մէջ նպատակ մը չ'մնար:

Եկեղեցիներուն մէջ ալ կան այսպիսի անձեր, որոնց խօսակցութենէն, նայուածքէն, խնդրացքէն կը հասկնաս: Նոյն ատեն ալ չեն ընդունիր որ դառնացած են:

Աստուածաշունչին մէջ կը հանդիպինք Յովնանին որ Աստուծոյ դէմ դառնացաւ, Աստուած իրեն ըսաւ «գնա Նինուէ քաղաքը և քարոպէ և եթէ անոնք իրենց մեղքերէն դառնան, պիտի ներեմ իրենց» և Յովնան չոպեց որ Աստուած ներէ Նինուէի, ուրեմն Աստուծոյ դէմ դառնացաւ: Ոմանք ուրիշներու յանցանքովը կը զուարճանան, բայց Աստուած կուպէ որ մենք բոլոր դառնութիւնը մեր վրայէն վերցնենք և քաղցր ու գթած ըլլանք իրարու:

Եթէ Բրիստոնեայ մը մեղք գործէ, յանցաւոր կ'զգայ իսկ եթէ ուրիշ մը իր մեղքը տարաձայնէ կը դայնանայ:

Յանցաւոր կ'զգանք եթէ մենք մեղք գործենք, կը դառնանանք երբ ուրիշներ մեպի դէմ մեղք գործեն: Երբեմն այդ մեղքը երեսա-

կայական կ'ըլլայ, և դիմացինը վայն տարածելուն համար ներդրութիւն չիմնողներ, ուրեմն մենք մեր բոլոր կեանքի ընթացքին դառնացա՞ծ պիտի վզանք:

Դառնութիւն կունենանք եթէ անիրատւութիւնը կուգայ. մեր մօտիկ Բարեկամներէ, ազգականներէ, և ընտանիքէդ, երբեմն նույնիսկ Աստուծոյ դեմ կը դառնանանք:

Երբեմն կը խորհինք որ իրատւնք ունինք դառնանալու, բայց Աստուծոյ խօսքը որեւէ մեկուն իրատւնք չտար դառնանալու: Երբայեցիս 12: 15 ին մէջ կըսէ, «Զգուշացէք չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մընայ, չըլլայ որ դառնութեան արմատ մը վեր երեւնալով՝ ձեզ նեղէ, ու անով շատերը պղծուին»: Հոս կը բացատրուի, որ դառնութիւնը արմատ մըն է գետնին տակը պահուած, բայց երբ գետինը սկսի ոտիլ յայտնի կ'ըլլայ որ տակը արմատ կայ:

Արմատը գետնին տակը չմնար, եթէ ջուր, մնունդ տաս, ծառ կ'ըլլայ և վերջն ալ պտտող կուտայ, խնձորի ծառը խնձոր կուտայ, դառնութեան ծառը դառն պտտող կուտայ:

Ի՞նչ կը պատահի անձի մը որ տարիներով իր մէջ պահէ դառնութիւնը: Ի՞նչ կը պատահի ֆիզիքապէս և հոգեբանորէն:

Աշխարհ երկու լուծում ունի, դառնութիւնը մէջդ պահելով հիվանդացի՞ր, և կամ դուրս հանելով շուրջիններիդ հիւանդացու՞ր:

Աստուծոյ լուծումը՝ արմատը փորել, դուրս հանել և նետել ու այս ձեւով ապատիլ դառնութեան արմատէն: Բայց այս ընելու համար Աստուծոյ շնորհքին պետք ունինք: Մէկը Տէր Յիսուսը ճանչնալու է որ կարենայ այս բանը ընել: Ան շնորհքի աղբիւրն է:

Յակոբու Առաքելոյն Ընդհանրական թողութիւն 3-րդ գլխուն 14, 15, 16 համարներուն մէջ կըսէ, «Ապա եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունենաք սիրտերնուդ մէջ, մի պարծենաք ու ճշմարտութիւնը ստա հանէք: Այս իմաստութիւնը վերէն իջած չէ, հապա երկրաւոր, շնչաւոր և դիակական է: Քանպի ուր նախանձ ու կոխ կայ, հոն է անկարգութիւնը և ամէն չար բաները: Եթէ հիւրասիրես դառնութիւնը երկար ատեն, չարասիրտութիւնն ու ատելութիւնը սովորական վարժութիւն պիտի ըլլան, և ասիկա երկինքէն չ'գար հապա չար ոգիէն»:

Ինչպէ՞ս կրնաս գիտնալ որ դառնութիւն ունիս. Առաջին նշանը Այն է որ դառնութիւնը կը յիշէ ամէն մանրամասնութիւն: Հապարատր խօսակցութիւններ ունեցած ես կեանքիդ մէջ, և մեծամասնութիւնը մոռացած ես: Այս մէկը՝ հինգ տարիներ առաջ պատահած է, և դուն կը յիշես ամէն մէկ խօսուած բառին եղանակը և

հուլովումը: Մարդիկ բարի խորհրդածոյութիւնները աւելի կը խորհին և կ'որոճան չար խօսակցոյութիւններ: Դառնութեան լուծումը անկէ ապատիլ է:

Մարդիկ չեն հասնաձայնիր դառնութեան մեղքին հետ, որովհետեւ միշտ մեղքը իրենցը չէ, բայց միայն դիմացինինը, կարետը է որ մեր սրտերը պատրաստ ըլլան ներելու և սիրով լեցովին: Դառնութիւնէ ապատելու համար հաստատ մտքով խոստովանէ մեղքդ Աստուծոյ առջեւ:

Երբեմն կը խորհուի որ դառնութիւնը մեր մէջ յառաջ կուգայ դիմացինին մեյի հանդէպ գործած մեղքէն, ոչ, այդպէս չէ, իրականութիւնը ան է որ դառնութիւնը ինքնին մեղք մըն է, եւ որքան սնուցանուի այնքան կը պօրանայ, կը խորհինք որ անիրաւութիւն ընողը եթէ ներում խնդրէ դառնութիւնը պիտի վերջանայ, բայց չի վերջանար, դառնութիւն ունեցող անձը պետք է խոստովանի և ձերբապատուի դառնութեան մեղքէն:

Անգամ մը Աւետարանիչ մը բանտի մը մեջ պիտի քարոզէր, բանտարկեալ մը մօտեցաւ և -հարցուց իրեն թէ ի՞նչպէս կրնայ ձերբապատուիլ դառնութենէ մարդու մը հանդէպ որ իր 3 տարեկան տղան լավ մը ծեծված էր, Ավետարանիչը ըսաւ եթէ դուն ձերբապատուիս դառնութենէ կրնաս օգնել այդ անձին որ ուրիշ պատիկներ ալ չցուցնէ, բանտարկեալը ըսաւ «Այդ մարդը մեյի հետ չէ, ես պիտի սպաննեցի, պաակս ցաւցուցած ըլլալուն համար, անոր համար ես բանտարկուած եմ», ուրեմն դիմացինը մեղքներով չկրցաւ ապատիլ դառնութենէ, միայն խոստովանելով, Աստուծոյ օգնութեամբ կարելի է ապատիլ:

Նույն Աւետարանիչը անգամ մը Ամերիկեան նաալիին պիտոտրաւան հանդէսին պատգամ կուտար, և հոն սպա մը դառնացած սիրտ մը ունէր, քարոզէն ապրուած խոստովանեցաւ իր դառնածած ըլլալը և խնդրեց Աստուծուէ որ օգնէ իրեն ձերբապատուելու Անկէ:

Յորդայից գաաթ մը որ լեցուն է քաղցր ջուրով, իրմէ կաթիլ մը լեղի ջուր չ'թափիր, որքան ալ պօրատր ցնցենք: Եթե անուշ ջուրով լեցուն է, անուշ ջուր պիտի թափի: Տնցումները որքան ալ ուժգին ըլլան անուշ ջուրը լեղի ջուրի պիտի չ'փոխուի: Տնցումները դուրս կը բերեն ինչ որ գաաթը կը պարունակէ:

Եթէ մենք ալ դառնութիւնով լեցուն ենք մեր արտահայտութիւնները ցուց պիտի տան: Լաւ կըլլայ որ ընդունինք մեր դառնացած ելլալը և Աստուծոյ օգնութեամբ ձերբապատուինք անկէ, և միայն անկէ յետոյ է որ կրնանք օգնել մեզ ցաւցնողներուն և օրինակ ըլլալ շատերուն: